



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
Հ Ր Ա Մ Ա Ն

23 *Տարբեր* 2011 թ

N 686 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 29-Ի N° 1197-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N°1005-Ն որոշման 18 մասի 4-րդ կետը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009 թվականի մայիսի 29-ի «Հարկ վճարողի կողմից պահանջվող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով, պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրման մասին» N° 1197-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Հրամանով հաստատված կարգում (այսուհետ՝ կարգ) «ՀՎՍ» բառը փոխարինել «սպասարկող» բառով.

2) Կարգի 5-րդ կետի «ա» ենթակետը լրացնել հետևյալ բառերով՝

«պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կազմելու իրավասություն ունեցող հարկային ծառայողի կողմից կազմած, հարկ վճարողի կողմից ստորագրված և կնքված (առկայության դեպքում)՝ համաձայն սույն հրամանին կից ձևի.».

3) Կարգի 8-րդ կետը «սպասարկման» բառից հետո լրացնել «գործառույթն իրականացնող» բառերով,

4) Կարգի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝


«18. Դիմումի մեջ էլեկտրոնային եղանակով ուղարկելու մասին նշում լինելու դեպքում, հարկային տեսչության պետի հավանությունն ստանալուց հետո, սպասարկող բաժնի իրավասու աշխատակիցն ստորագրված, կնքված և սկանավորված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված

տեղեկանքը տրամադրում է էլեկտրոնային փոստով (վերջինիս առկայության դեպքում) կամ կցում հարկային մարմնի կայքէջի հարկ վճարողի բաժնին:».

5) Հրամանի ձև N2-ում հանել «(հազար դրամ)» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ



Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտեի

հարկային տեսչության պետ պարոն  
-ին

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Խնդրում եմ ինձ \_\_\_\_\_ տրամադրել \_\_ . \_\_ . 20\_\_ թվականի դրությամբ  
( փոստով, առձեռն, էլեկտրոնային եղանակով)

\_\_\_\_\_ -ի  
(կազմակերպական իրավական փեսակը, կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ ,ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը,ՀՎՀՀ)

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների վերաբերյալ  
տեղեկանք, ներկայացնելու՝

\_\_\_\_\_ (կազմակերպության անվանումը, ուր պետք է ներկայացվի տեղեկանքը)

Հարկ վճարողի  
պաշտոնատար անձի՝

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ (անունը,ազգանունը)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ